CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
CHAIRMAN

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПРЕДСЕДАТЕЛЬ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ՆԱԽԱԳԱՀ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.:(37410) 583 841
Fax:(37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ.՝ (37410) 583 841
Ֆաքս՝ (37410) 565 496

0010,Ереван, Вазгена Саркисяна,6
Тел.: (37410) 583 841
Факс: (37410) 565 496

16.03.2016 N 20.4-08/000180-16

Ձեր N

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի
նախարար պարոն Էդվարդ Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Եվրասիական տնտեսական միության շրջանակներում կնքվող «Եվրասիական տնտեսական միության մեկ անդամ պետության բրոքերների և դիլերների՝ այլ անդամ պետությունների բորսաներ (առևտրի կազմակերպիչներ) մուտքի մասին» համաձայնագրի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

Խնդրում ենք տեղեկացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պատրաստակամ է ստորագրել Նախագծի ներկայացված տարբերակը:

Առդիր՝

1. Նախագծի ռուսերեն տարբերակը՝ 14 էջ,
2. Նախագծի հայերեն տարբերակը լրամշակված ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ 14 էջ,
3. Նախագծի կապակցությամբ շահագրգիռ նախարարությունների դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթը՝ 4 էջ,
4. Նախագծի կնքման նպատակահարմարության մասին տեղեկանք՝ 2 էջ,
5. Շահագրգիռ գերատեսչությունների կարծիքների պատճենները՝ 5 էջ:

Հարգանքով՝ Արթուր Ջավադյան

Կատ.՝ Անահիտ Մուրադյան
Հեռ.՝ (+374 10) 592 713

02361
16 03 16

ՏԵՂԵԿԱՆՔ

«Եվրասիական տնտեսական միության մեկ անդամ պետության բրոքերների և դիլերների՝ այլ անդամ պետությունների բորսաներ (առևտրի կազմակերպիչներ) մուտքի մասին» Համաձայնագրի նախագծի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ

ԵԱՏՄ շրջանակներում միասնական ֆինանսական շուկայի ստեղծումը 2014թ. մայիսի 29-ին կնքված Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի կարևոր տարր է հանդիսանում: Այն ենթադրում է անդամ պետությունների ֆինանսական շուկաներին հասանելիության, ֆինանսական ծառայությունների ոլորտում սպառողների շահերի պաշտպանության ապահովում, բանկային, ապահովագրական և արժեթղթերի շուկայի ոլորտներում լիցենզիաների փոխադարձ ճանաչման համար պայմանների ստեղծում:

Որպես միասնական ֆինանսական շուկայի ստեղծման առաջին քայլ նախաձեռնվել է «Բրոքեր-դիլեր» պիլոտային ծրագիրը, որի իրականացման նպատակով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մշակվել է «ԵԱՏՄ մեկ անդամ պետության բրոքերների և դիլերների՝ այլ անդամ պետությունների բորսաներ (առևտրի կազմակերպիչներ) մուտքի մասին» համաձայնագրի նախագիծը (այսուհետ՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի կնքումը հնարավորություն կտա ՀՀ ռեզիդենտ ներդրումային ծառայություն մատուցող անձանց ձեռք բերել ԵԱՏՄ անդամ պետությունների բորսաներում շրջանառվող արժեթղթեր ինչպես ՀՀ ռեզիդենտ, այնպես էլ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետությունների ռեզիդենտ հաճախորդների համար: Միևնույն ժամանակ այն կապահովի ներդրումների ներգրավումը ՀՀ արժեթղթերի շուկա՝ ՀՀ բորսայում շրջանառվող արժեթղթերին ԵԱՏՄ անդամ պետությունների ներդրումային ծառայություն մատուցող անձանց հասանելիության տրամադրման միջոցով:

Համաձայնագիրն ապահովում է ԵԱՏՄ անդամ պետությունների բրոքերների և դիլերների անմիջական հասանելությունը այլ անդամ պետությունների արժեթղթերի և ածանցյալ գործիքների կարգավորվող շուկաներին: Մասնավորապես, համաձայնագիրը սահմանում է ԵԱՏՄ անդամ պետությունների բրոքերների և դիլերների կողմից այլ անդամ պետությունների արժեթղթերի կարգավորվող շուկա մուտքի կանոնները, նրանց գործունեության

վերահսկողության, ստուգումների, անհրաժեշտության դեպքում համատեղ ստուգումների անցկացման ընթացակարգերը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ միասնական ֆինանսական շուկայի ստեղծման գործընթացի արդյունավետ ապահովման տեսանկյունից «ԵԱՏՄ անդամ պետությունների բրոքերների և դիլերների՝ ԵԱՏՄ ֆոնդային բորսաներին փոխադարձ հասանելիության վերաբերյալ» համաձայնագրի կնքումը համարում ենք նպատակահարմար: